



ԱՐԾՈՒՄ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՆՅԱՆ ԶԱՅՐԵՆԱՆԻ ԹԵՒՕՐ
ՅԱՐԾՈՒՄՆԻ ՄԵՆԵՍԵՆԵՆ ՊԱՐԱԳԼՅ

ԽՈՐԱԳԻՐ ԶԱՅՐԵՆԱՆԻՕՒ
ԽՈՐՏԻՉ ԳԼՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՏԻՉ

1864 թ. 2.

ՀԱՅՈՒ ԶԱՅՐԱՆ

Բ.ՅԺ. ԴԻՉ

ԳԼՈՒԹՅՈՒՆ

Տ ԳԼՈՒԹՅՈՒՆ ԳԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԾՈՒՄՆԻ

Ի ԳԼՈՒԹՅՈՒՆ



THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

1155 Broadway, New York City

1897

կրնթանայ . հայրենիսց կործանեալ տաճարը վերստին կան-
գընելու համար մի եւ նոյն ճարտարապետական լարով կը-
չափեն հիմունքները ինչպէս Տաճկաստանի Հայկազունքը ,
եթէ այլատարադէ իւրեանց ճարտարապետական կանգու-
նին չափը . շինող ճարտարապետներուն մէջ զուգութիւն
կամ համաձայնութիւն կայ . եթէ նոյն երկպառակութեան
հոգին կ'տիրէ ինչպէս Տաճկաստանի Ազգային Սահմանա-
դրութեան համար կամ ուրիշ խնդիրներուն համար յուզ-
ուած խառնաշփոթ վէճերը :

Ահա սոյն քանի առարկաներուն վերայ սկսինք այժմ Ռու-
սաստանի Հայկազանց հոգին չափել կամ բացատրել Տաճ-
կաստանի Հայոց , որպէսզի գիտնան ու ճանչնան իւրեանց
փոքրիկ մասն Հայ ժողովրդոց այժմեան դրութեան վիճակը
ուրախ լինին ու խնդան գեղեցիկ յառաջադիմութեան մա-
սերուն համար , լան ու սղան , իվերայ երկպառակութեան
տիրող հոգւոյն , որ զոգ թէ ընդհանուր աշխարհիս բազմա-
լեզու մարդկութեան մէջը , ո՛հ , գիտես թէ Հայ սրտեր մի-
այն կ'գտնէ ու կ'բաժանէ անմիաբանութեամբ . միթէ
մեր թշուառ Հայաստանին համար ինքն Բաբելոնեան հար-
ուած մի է Ատուծոյ արդարաւատի ձեռաց , որ հակառակ
հողմերով կ'փչէ սաստիկ ու վեր իվար կտապալէ հայրենի
շինութեան աշտարակը . Միթէ վերջին դարուս վերջին
Հայերը նոյն նախնի դարուն ամբարտաւանութեան կամ
բարձրայտնութեան հոգի՞ն կ'կրեն դեռ խորենացոյցն ասա-
ծին պէս , որ սյապիսի պատժոյ մի արժանի համարուին .
Թողումք այս մասին ուրիշ անգամ ողբալու , գանք այժմ
բունվերին առաջարկութեանց վերայ խօսինք ու չափենք
որքան մեր տկար մտաց կշիռ կ'զօրէ :

Թող տալով Հայկազանց ուրիշ փոքրիկ մասերը որ հե-

աւար աշխարհներուն մէջ յրուած դաղթականութեամբ
կքնակին խիստ հեռու մնալով ու գրկուելով հայրենի աշ-
խարհի ծոցէն. խօսինք միայն Ռուսաբնակ Հայկազանց վե-
րայ որոնց աչքին խիստ մօտ են բուն հայրենեաց սահման-
ները :

Այս լուսաւորեալ հոգակուած դար կամ ժամանակը
թէ եւ իւր յառաջադիմութեան արեւուն լոյսը եւրօպիոյ
աշխարհներում պայծառ ծագերէ, սակայն ընդհանուր Ասի-
ոյ մէջը դեռ մթնախառն արշալոյս մի է եւ այն ի տեղիս
տեղիս : Տաճկաստանի եւ Ռուսաստանի յառաջադիմու-
թեան արշալոյսը խիստ քիչ զանազանութիւն ունին իրար-
մէ լուսաւորութեան մասին. հարկաւ պէտք է այլ եւ այլ
իշխանութեան կամ տէրութեան ներքեւ հպատակ Հայ
ժողովուրդները փոքր ՚ի շատէ զանազանութիւն ունենան
իրարմէ բողոքական օրինաց ազդեցութենէն կամ ուրիշ
առանձին պատճառներէ : Իսլայ հօր ժամանակին տնխոր-
տակելի սուրը հին ժամանակուան միտքեր կաշկանդող հաստ
չուաններուն կապերը կտրեց, գրեթէ բոլոր աշխարհիս
մէջը գերութեան կապերէն միտքեր ազատուելով սկսեցին
խորհիլ ու մտածել : Ուստի ո՞վ կարող է ասել թէ Ռուսաս-
տանի Հայկազանց զգայուն միտքերը դեռ իրրեւ անզգայ
թմրած կքնանան, ու երբէք չեն խորհիր կամ մտածեր
ազգային յառաջադիմութեան համար, կամ Արարտեան
եւ Վոլկասեան Հայկազանց մէջը շատ հազուադիւր են
խորհող ու մտածող ուսումնական անձինքները : Տաճկաս-
տանի ուսումնականաց թուոյն հետը համեմատելով գրե-
թէ հաւատար են կամ խիստ փոքր տարրերութիւն հազիւ
կերեւայ : Վասպուրական Արձուին իւր ճանապարհորդու-
թեան մէջը Տփլիս, Դանձակ, Շուշի (Ղարապաղ) »

Երեւան, Նախջուան, Ագուլիս՝ կարծածէն աւելի բաւական
 ուսեալ անձինքները տեսաւ. որոնց հետը խօսեցաւ երկար
 ամէն ազգային յառաջադիմութեան վերաբերեալ յիւթե-
 լու վերայ. չափեց նոցա սրտի եռանդը, որ շատ մասերու մէջ
 աւելի կենդանի եւ զգայուն էր Տաճկաստանի ուսում-
 նականաց եռանդէն, մանաւանդ զինուորական կարգին մէջ
 եղած ուսումնականները. վասնզի սրտի եռանդը վառող
 արեական առաքինութեան սրբազան կրակն է. ո՞վ կ տարա-
 կուտի, որ այս մասին մէջը Ռուսիոյ Հայկազունքը գերազանց
 են: Բայց պիտի հարցնեն մեզ Տաճկաստանի Հայկա-
 զունք թէ, այդ աշխոյժ եռանդը վսեմ մտածմունք
 եւ խորհուրդը Ռուսաստանի Հայկազանց ինչ արդիւնք
 ծներէ ազգային յառաջադիմութեան համար: Այո՞
 լով սրտի եռանդը մտածմունք կամ խորհուրդը ա-
 ռանց արդիւնքի զուր եւ ընդունայն մտաց ըզբաղ-
 մունքներ են, վասնզի մարդկային մտաց խորհուրդ-
 ները միայն գործը եւ արդիւնքը կպսակեն: Այս մասին
 այսչափ լուր կուտամ Տաճկաստանի սիրելի ազգայնոց,
 թէպէտ եւ Ռուսիոյ հայկազանց միտքը սկսերեն շատ խոր-
 հուրդներ յղանալ ազգային յառաջադիմութեան համար,
 բայց դեռ քիչ զաւակներ ծներ են մեր նախնի հայրենիքը
 բարդաւաճելու. այսինքն դպրոցաց կամ ուսումնարանաց
 թիւը խիստ սակաւ տեսայ հինգ հարիւր հազար Հայ բնակ-
 չաց թուոյն հետ բաղդատելով. դեռ այդ վերի յիշուած
 քանի մի երեւելի հայաբնակ քաղաքներուն միայն մէկ բա-
 նին մէջ հաստատուած կան արդէն կամ նոր պիտի հաս-
 տատուին ազգային դպրոցներ. ասով միայն պիտի յուսաց-
 ուի որ այսուհետեւ նոր նոր զաւակներ ծնանին նոյն դպրո-
 ցաց արգանդէն եւ պիտի սնանին ու զարգանան առան-

զաքները թէ աղգային գարոցներուն կամ կարդացող մանկ-
 տիներուն թիւը սակաւ է . բայց ամէն քաղաքներուն մէջը
 գտնէ երեք չորս ընտիր ուսումնական անձինքներ կգտնու-
 ին։ Այսպէս ճշմարիտ խօսելով՝ Ներսիսեան գարուի, Լազար-
 եանց մեծահամբաւ ճեմարանին եւ Ռուսիոյ արքունական
 դպրոցներուն շնորհքն է։ Ռուսի այս զուրցածներէս յայտնի
 կտեսնուի թէ Ռուսիոյ Հոյոց մտածմունք եւ խորհուրդը աղ-
 գային յառաջագիմութեան նպատակը հասնելու համար
 միմիայն ուսման միջոցն է . ինչպէս որ Տաճկաստանի Հայ-
 կազուէքն էլ այս կետիս վերայ կմտածեն եւ ամենայն զօ-
 րութեամբ կհետեւին . որով կհասկցուի, որ այս երկու
 ինքնակու Տէրութեանց Հայ հպատակները համաձայն կը
 մտածեն կխորհին եւ մի եւ նոյն շաւղի վերայ կընթանան . ինչ
 չի յուսար թէ պիտի հասնին կամ ուշ կամ անադան .
 այս ալ ընկերական կամ միութեան հոգին գիտէ . Սակայն
 ատոյց խոստովանելու է եթէ Ռուսաստանի հայկազանց նիւ-
 թական հարստութեան հետը միութեան հոգին օժանդա-
 կութեան ձեռք տայ՝ անտարակոյս Տաճկաստանի հայերէն
 յառաջ պիտի հասնին այն ցանկալի յառաջող խնութեան
 նպատակին ու մրցանակն պարծանօք պիտի առնեն։ Նմա-
 նապէս եթէ նիւթական հարստութիւնը ձեռք տայ Տաճ-
 կաստանի միաբանական հոգւոյն . անշուշտ նոքա յառա-
 ջադէմ պիտի հանդիսանան . բայց աւա՜ղ , չքաւորու-
 թեան մեծամեծ խոչերը ընթացողաց ճանապարհ բռներ
 են սմէն կողմէն . թէ եւ ընկերազօգ միաբանական հո-
 գին նուազիկ վտակներէն մեծամեծ գետեր կաղմելով ճա-
 նապարհի պատահած խոչերը կգլորէ ու յորդութեամբ վա-
 զելով կընթանայ դէպի նպատակն . այլ կրկին անգամ
 աւա՜ղ կ կանչէ Արծիւը, մինչդեռ կտեսնայ այս ներկայիս

մէջը Տաճկաստանի Հայոց միաբանական հոգւոյն վրդովումն , որուն համար ետքէն պիտի ողբայ :

Խօսիմք դարձեալ՝ եթէ Ռուսաստանի Հայկազունքը ուսումնասիրութեան մասին կ'մտածեն կ'խորհին եւ ամուլ եղնեւրունման հաւասար քալելով հերկել ու պատառել կուզեն մեր Հայաստանի տգիտութեամբ կորդացած երկիրը , արդեօք հայրենեաց վաղեմի փրած տաճարը վերստին շինելու համար ինչ ճարտարապետական կանգունով կ'չափեն այս տաճարին հիմնարկութեան շէնքը , որ տեղ , ինչ ձեւով , ո՞վ կընտրեն ճարտարապետ : Այս առարկայից վերայ մի եւ նոյն գաղափար ունին եւ միօրինակ համաձայն կ'մտածեն Ռուսիոյ Հայկազունք ինչպէս Տաճկաստանին . ամէնքն ալ իմիասին կաղաղակեն հայրենիքը շինելը , եւ այս շինութեան բուն միջոցը կամ սկզբնաւորութեան հիմն ուրիշ բան պէտք չէ , բայց միայն ուսումնական յառաջադիմութիւնը . իւրեանց ձեռքի չափ եւ կանգունը այսէ բուն ազգային կառավարութեան համար օրէնք , կանոն եւ բարեկարգութիւն : Ասոր համար հազար բերան երանի կուտան Տաճկաստանի Հայոց , որոնք նուիրական աշխատութեամբ ձեռք զարկին Ազգային Սահմանադրութիւնը հաստատել : Բայց այժմ երանութեան տեղ թող վայկարդան , ուրախացուցեան փոխարէն թող սղան եւ տրտմին , մինչդեռ Տաճկաստանի լրագրաց բօթալից ձայներէն կ'իմանան թէ Սահմանադրութեան նորաբոյս բողբոջը չորացնելու համար մի եւ նոյն ազգային համշիրակ հոգիներէն հակառակահօղմ խորշակներ կ'փչեն . որուն համար թող կուտամ յետոյ ողբալ :

Շինութեան ձեւին կողմանէ այս կ'մտածեն , որ անոնց բնաւ նոր փոփոխութեան մի եւ նոյն հանճարեղ՝ Նախնեաց ճարտարապետական ձեւին վերայ կառուցանեն հայրենեաց

տաճարին շէնքը : Այս տաճարին բարւոք շինութեան
կամ հաստատութեան համար ամէնքն ալ միաբան հաւանու-
թեամբ առաջին կարգի ծարտարապետական պաշտօնը եկե-
ղեցական դասուն կ'յանձնեն. որոնք պէտք է իբրեւ Զո-
րաբաբէլ իբրեւ Եգրաս առաջնորդ եւ զօրաւոր գործա-
դէրիչ հանդիսանան հայրենի Երուսաղէմին համար : Իսկ
չայոց իշխանները եւ առ հասարակ ժողովուրդը թող իբրեւ
հետեւող կամ օժանդակ ձեռն տան շինութեան . վասն զի
ծարտարապետութիւն հոգեւոր մասին կ'պատկանի . ուրե-
մըն աշխարհական կարգի մարդիկները թող նոյն հոգեւոր մա-
սին հետ միացած իբրեւ գործունեայ մարմին եւ անդամ
յառաջ վարեն այս շինութեան գործը . մի թէ կարելի է , ո՛վ
կ'հաւատայ որ առանց այս երկու մասին միութեան հայ-
րենի տաճարի շէնքը կատար հասնի : Սակայն մինչդեռ աշ-
խարհական դասը սկսեց իւրաքաչաք աշխատասիրական ուսմամբ
բանալ . մինչդեռ կ'տեսնայ , որ եկեղեցական ծարտա-
րապետներ կամ անհոգութեամբ եւ կամ տգիտութեամբ
իւրեանց իրաւունքը կամ սեփական պարտուց պաշտօնը չեն
ճանաչեր . այսինքն թող տուերեն ձեռքէ այն ծարտարա-
պետութեան Աստուածատուր կանգուն կամ լարը . հարկաւ
ինքն յաիշտակութիւն կամ անիրաւութիւն չհամարելով յա-
ռաջ անցեր է եւ կուղէ ծարտարապետ հանդիսանալ : Ո՛վ
կարողէ մեղադրել զինքն . « Որ հանձարեղնէ զառաջնորդու-
թիւն ստացի » : Արդարեւ տգիտութիւն մեր բերան
փոխեց , անհոգութիւն մեր ականջներ իւցուց , ծուլութիւն
մեր ոտքի յառաջադիմութիւնը կապեց . մինչեւ ետքիներ
յառաջ անցան , տգէտներ իմաստնացան , զաւակները հօր
վերայ ծիծաղեցին : Ռուսիոյ եւ Տաճկաստանի չայկաղունք
բամբասանաց բերան կարծեմ չափէն աւելի լայն բա-

ցերեն մեր վերայ. Հայ լրագրաց խմբագիրները ամպի պէս
որոտալով մեծամեծ կարկուտներու գնտակներ թափելով
իրաւի անիրաւի գլխէն մինչեւ ոտքը վիրաւորեցին մեր եկե-
ղեցական դասը : Սակայն համբերենք, չվհատինք, սիրենք
դարձեալ Հայ ժողովուրդը, վասն զի համեստ եւ երկիւղած
է ինքն. չեմ կարծեր, որ չափէն աւելի ձեռնէրէց լինելով
Աստուծոյ տուած իրաւունքը մեր ձեռքէն խլէ, իւր բա-
բասնաց լեզուն մեզի համար զգաստութեան խթան մի
է, չզայրանանք : Դարձեալ ինքն պատկառանք յարգելով
կամ Աստուածային սահմանադրութեան օրէնքը պաշտելով
հայրենեաց շինութեան ճարտարապետական իրաւունք
եկեղեցական դասուն կ'յանձնէ : Միայն թէ մեք ալ մեր
ձեռաց կանգուն եւ լար ճշմարտութեան հիման վերայ
ուղիղ չափելով սկսենք նորոգել հայրենեաց տաճարին աւե-
րակը :

Իր մնայ մեզ խօսիլ թէ Ռուսիոյ Հայկազունք՝ այս տա-
ճարին հիմնարկութիւնը ո՞ւր տեղ եւ ո՞ր հողի վերայ ձգել
կուզեն : Այս մասին տարակոյս չկայ. հայրենիքէն հեռա-
ցած Հայերը ուր որ գաղթականութեամբ ջրուելով իրենց
բնակութիւնը հաստատեն են, այն տեղը կուզեն հայրեն-
եաց տաճար շինել : Պօլսեցին՝ Վոսիորին եղբրքը, Տփլիսեցին
Կուր գետին ափը, Հնդկաստանցին՝ Գանգէսին մօտը, նմա-
նապէս Պարսկահայք եւ ուրիշ գաղթական բնակիչները
ամէն մէկ օտար եւ պանդուխտ հողերուն վերայ կուզեն
հայրենեաց տաճար կանգնել : Անխորհուրդ մտածմունք
եւ ձեռնարկութիւն : Այս է ահա գաւառասիրական հո-
գւոյն արդիւնքը, կամ խելացնոր հայրենասիրութիւնը :
Բուն Հայաստանեայց հողէն կամ սահմանէն դուրս հայ-
րենի տաճարին հիմն դնող մարդիկը դէպ 'իւր հաստան

գնացող քառասուն հազար Հայ գաղթականաց պատմութիւն թու կարդան, կամ ներկայ ժամանակիս մէջը ոտքով շրջելով Լեհաստանի սահմանները գոնէ այնչափ գաղթականներէն Հայ մի գտնան. ո՛հ, կարծեմ միայն իրենց անուան յիշատակ կարող են կարդալ նախնաշէն եկեղեցեաց քարերուն վերայ, որոնք այժմ առ հասարակ Լատինացիք գրաւած են. Բայց միթէ Տաճկաստանի եւ Ռուսաստանի ողջամիտ ազգատիրաց մասն այս թիւրամիտ կարծեաց կհետեւին, քա՛ւ, հապա հայրենի սահմանէն դուրս հայրենիքը չեն ճանչնար. վասն զի այնչափ Հայ գաղթականաց կորուստը մեղի բաւական փորձ ու խրատ է. իսկ Եթէ մէկմի Եւրոպացւոց գաղթականութեան օրինակը իբրեւ ապացոյց մէջ բերելով ջանք ընէ այս ողջամիտ կարծիք ջրելը, թէ ինչպէս աշխարհիս չորսանկիւնը՝ ուր որ գաղթականութեամբ գնացելն Եւրոպացւոց ազգը, այն տեղը իբրեւ նախնի սեփական հայրենեաց մէջը հաստատութիւն գտերեն առանց ազգութիւն կորսնցնելու: Միթէ Հայաստանի ընդարձակ սահմանը իւր սակաւամթիւ որդիքները կ'ձնչէ՞, դէպ ի Բաբելոն գնացող նախնի գաղթականաց պէս: Այո՛ երբեմն հայրենիք ճնշեց ու նեղեց սաստիկ իւր սիրասուն ծոցի զաւկները Լենկթիմուրին եւ ուրիշ բարբարոսներուն արշաւանքով. այլ այժմ այդ հայրենեաց հարուած բերող ձեռքը գերեզմաններու մէջը փոշի դարձան, եւ իւր զաւակները խաղաղութեան դաշտերու մէջը կ'ըջնին ապահով, միայն թէ հազի կարօտ են. ո՛հ. մինչդեռ Եւրոպացին իմաստութեամբ, արուեստով եւ քաղաքական ողդեցութեան տէգը իւր ձեռք բռնեցով բոլոր աշխարհը իւր հայրենիքը կ'չափէ, ողորմելի Հայն իւր հայրենեաց մէջը անհայրենիք կ'բնակի. գիտե՛ս թէ

Մարգարէին գուշակութիւնը եւ Աստուծոյ ցաւման սպաս-
նալիքը Հրէաստանէն ի զատ Հայաստանին վերայ ալ
կըկատարուի «Աշխարհ ձեր առաջի ձերօտարք կերկցեն»
եւ այլն :

Այս համառօտութեան մէջը կարծեմ բաւական հաս-
կըցար, ուշիմ ընթերցող, թէ Ռուսիոյ Հայկազանց հոգին
գրեթէ բոլորովն համաձայնէ Տաճկաստանի Հայոց եւ թէ
ազգային յառաջադիմութեան համար մի եւ նոյն անձնա-
նուէր աշխատութեամբ կ'վստակին . եւ թէ Տաճկաստանի
Սահմանադրութիւնը նմանապէս յարգելի մեծարանօք
կ'ընդունին եւ կ'պատուեն իբրեւ առաջին միջոց հայրեն-
եաց յառաջողիմութեանը . եւ թէ հայրենեաց տաճա-
րը ուր որ աւերակ դարձած է, նոյն նախագիր հիման վերայ
վերստին շինելու տարաձայն կարծիք չունին :

Իսկ վստալուրական Արմուին որ կ'սիրէ Տաճկաստանի եւ
Ռուսիոյ հայկազունք իբրեւ երկու աչք, ողջամիտ ազգասի-
րաց կարծիքը յարգելով՝ հետեւեալ յօդուած կ'հրատարակէ
թէ Հայկազանց յառաջադիմութեան ասպարէզը հայրեն-
եաց դաշտն է միայն, հոնտեղ պէտք է խաղան, հոն մրցա-
նակն առնեն :

ՀԱՅԿԱԶԱՆՑ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆ ԲՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ Ե

Ո՛ր է Հայոց հայրենիքը, ուր որ դրախտն էր, ուր որ
Նոյ նահապետ բնակեցաւ ու մեռաւ, ուր որ Հայկըիւր
գերդաստանը հաստատեց եւ մեր ազգին նախահայրեղաւ,
ուր որ դիւցազունք Հայոց Արամ, մեծն Տիգրան եւ գե-

ղեցիկն Արա հայրենեաց սահմանները պաշտպանեցին օտարին ոտնակոխութենէն . ուր որ Արշակունի , Բագրատունի եւ Արծրունեան գահերը հաստատուեցան . ուր որ հարկւրաւոր պերճ Նախարարութեանց կալուածական երկիրներն են , ուր որ Հայոց Աստուածպաշտութեան վկայ այն չափ վանորէից ու եկեղեցեաց տաճարներու հրաշակերտ կամարներ կառուցուած են , որը կանգուն որն աւերակ դարձած . այն հողեր ու դաշտեր , զոր մեր սուրբ Նահատակաց արիւնները թրջեցին . այն սուրբ շիրիմները , ուր որ մեր առաքիլի Նախնիքները կենջեն . ահա այս նրուիրական տեղերն են մեր հայրենիքը կամ հայ զաւկներուն սեփհական կալուած ու աստուածապարգեւ ժառանգ :

Թէ եւթշնամեաց օրով եւ այլ բազմատեսակ հարուածներով Հայոց բազմաթիւր սերունդներուն թիւը նուազեցան , մանաւանդ գաղթականութեամբ . բայց դեռ մնացորդ զաւկներուն մեծագոյն մասն հայրենի աշխարհին մէջ կրնակին . դեռ Այրարատ , Բարձր Հայք , Տարօն , Վասպուրական եւ այլ նշանաւոր նահանգները Հայոց բազմութեան կեդրոն կհամարուին : Ահա սոյն հայրենի աշխարհներուն ծոցը՝ Հայկազանց կտոր կտոր եղած մարմնոյն մեծագոյն մասն դեռ կենդանի կապրի : Ոտքին մէկը դէպ ի Յունաստանի երկիրներն , միւսն ալ դէպ ի Վրաստանի Սուրբ համարենք եւ ձեռքեր ու մատուցներն ալ ի Պարսկաստան , ի Հնդկաստան եւ այլ ուրիշ հեռաւոր աշխարհներու եզերքները պարզուած են : Հայկազանց յառաջադիմութեան քայլը գրեթէ մեծագոյն մասամբ միայն Յունաստանի եւ Սուրբ համարենք երկիրներու մէջը փոքր փոքր շարժումներ սկսեց են . իսկ բուն Հայաստանի միջնաշխարհի բնակիչները իրեւ անոտն եւ անձեռն մարմին դեռ թմրութեան

մէջ ինկած կան, իւր աչքերը տգիտութեան թանձր մթոյն վարագոյր պատերէ, կտրած է բոլորովին սրտէն կենդանական շարժման արօրհն . այսինքն հայրենասիրական զգացումն : Ականջները փոքր ինչ ազգային լրագրաց սուր խթաններով կը լսէ հեռու տեղերէն խրատուսանաց ձայները : Լեզուն միայն կենդանի է եւ կաղաղակ է : Դու խօսիր, ուշիմ ընթացող, այս հայրենի մահճին մէջը տարածուած մարմինը ինչ զանազանութիւն ունի Պրոպագանդիստ աւազանին բով ինկած անօգնական անդամալուծէն, որ սա ալ նորա խօսքերը կրկնելով կ'անչէ միշտ »Տէր ոչ գոք ունիմ որ արկցէ զիս յաւազան« եւ այլն . այսինքն լուսաւորութեան եւ կրթութեան աւազանին մէջը ձգելով՝ գուցէ փարատուէր ինձմէ այս ագիտութեան ակտը, որ զիս բազմաժամանակեայ հիւանդութեամբ անդամալուծ ըրեր է : Ո՛ւր են հայրենեաց բժիշկները, թող գումարին եւ խորհին . այս անդամալուծ մարմին կամ ժողովուրդը վեր հանելու համար ի՞նչ ճար կայ, ի՞նչ պէտքէ . աւազան, ջուր եւ բժիշկ, այսինքն Դպրոց Ուսումն եւ Ուսուցիչ : Երկու մասամբ միանգամայն ակտացած է այս ողորմելի անդամալուծը, այսէ հոգեկան ու մարմնական ցաւերով . ուստի երկու դաս բժիշկներ պէտք են, հոգւոյն համար Սահակ, Մեսրոպը եւ խրատուսիչ Դէւոնդ . այս առաքիլներու հոգով վառուած Եպիսկոպոս, Քահանայ, Վարդապետ . իսկ մարմնոյն համար անձնանուէր Վարդան, Վահան, Մուշեղ եւ ասոնց նման հայրենա՝

« Դարձեալ երկու դաս ճարտարապետներ պէտք են փլած

ու աւերակ դարձած հայրենիքը շինելու համար իմաստուն եկեղեցական պաշտօնեայք, խորհրդական իշխանները, կամ միմասեղ դարձեալ Ղեւոնդ եւ Վարդան ձեռք ձեռքի տուած չէ թէ Աւարայրի դաշտ գնալով Պարսից սեւագունդին դէմ կռուին. հապա լուսաւորութեան ճառագայթներով Հայաստանին վերայ տարածուած ագիտութեան թանձր խաւարը հալածեն : Ողբացէք, հայրենեաց վերանորոգութեան ցանկացող ընթերցողները, թէ անբաղդ Հայաստան դեռ զուրկ է այս երկու դաս բժշկներէն եւ ճարտարապետներէն. ո՞վ պիտի զինքն բժշկէ, ո՞վ պիտի հայրենեաց շինութեայ հիմն դնէ այն տեղեր ուր քիչ էր :

Ղշմարիտ է այս, նոր դարուս մէջը Հայաստանին յառաջադիմութեան տաճար կանգնելու համար հանճարեղ ճարտարապետ պէտք է. ուրեմն ձեռք զարնենք նախ եւ առաջ ճարտարապետներ հանելու, այն տեղերէն ուր ուր մեր նախնի իմաստուն ճարտարապետները դուրս ելան :

Սկսենք այժմ աւելի պարզ խօսիլ. երկու Աթենական տաճար պէտք է Հայաստանին լուսաւորութեան համար, այսինքն եկեղեցական դպրոց եւ Ժողովրդական դպրոց : Ահա այս դպրոցներն են հայրենեաց շինութեան հիման առաջին քարերը, կամ ազգային յառաջադիմութեան զօրաւոր քայլը : Բայց որովհետեւ միշտ նախապատիւ է եկեղեցական դպրոց, ուստի արժան է համարիմ նախ նորա վերայ խօսիլ. վասնզի Հայաստանի ամբողջ մարմնոյն ճրագն է որուն համար խօսեց Տէր, « Եթէ ակնքո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի » : Ո՛հ Թողում առատութեան պայծառութիւնը, գրեթէ Հայաստանի ճրագը առկայծեալ կիւալիւայ. ուրեմն աշխատինք յառաջ այս ճրագները փառելու : Ճրագներուն գեղեցիկ սշտանակները պատ-

բաստ գեռ կանգուն կեցած են հայրենիք քակող աւելի
 ընդ ստիկներէն ազատուած : Ի՞նչին այս գեղեցիկ սշտա-
 նակները, մեր հռչակաւոր վանքեր ու Մենաստաններն են.
 որ բուն Հայաստանի իւրաքանչիւր գաւառներու մէջը
 յարմարադիր ու վայելուչ բլուրներու վերայ շինուած եւ ն
 բարձրակամար եւ հրաշակերտ տաճարներով : Ճրագներ
 վառելու ձէթին համար տարակու ելով հոգ չանենք. մինչ-
 դեռ մեր նախնի աստուածապաշտ ջերմեռանդ Թագաւոր-
 ները եւ Իշխանները ժամանակ ժամանակ ընդ ալձակ ու
 բարեբեր հողերը յիշատակ տուած են իբրեւ մշտնջենաւոր
 կալուած նոյն վանորէից. որոնց յաւերժական արձանագրու-
 թիւնը հին ձեռագրաց կողերը եւ տաճարաց քարերու վե-
 րայ անջինջ դրոշմուած կան մինչեւ ցայսօր : Թող զայս,
 նա եւ իւրաքանչիւր վանքի թէմական գիւղերը, որ այս ալ
 նախնեաց սահմանադրութեամբ նոյն վանքերու վերայ հաս-
 տատուած են եւ այն աղքատ գիւղացիները մեծ եկկիւ-
 ղածութեամբ անխախտ պահելով այս օրէնք՝ իւրեանց երկ-
 րի բերքերէն տարուէ տարի պէշի անունով արդիւնք
 կը նուիրեն առատութեամբ : Հապա էլ ի՞նչ պէտք է, միայն
 փառօղները. ուրեմն պատրաստենք. որպէս զի կրկին անգամ
 վառեն եւ լուսաւորեն մեր շիջած ճրագները ու դնեն այն
 բարձր աշտանակներուն վերայ. Թող տղիւտութեան մութին
 տակ նստած Հայոց մանկաները լոյս տեսնան ու զուարճա-
 նան : Խօսինք զարձեւալ այժմ ճրագ վառողներուն եւ աշ-
 տանակներուն համար :

Թող վառեն ամենէն յառաջ Հայաստանի կեդրոնական
 տան, այսինքն Այրարատայ աշխարհին Հայրապետանոցին
 ճրագը հարուստ լուսաւորութեամբ. գոնէ հարիւր աշա-
 կերտ պարունակող եկեղեցական դպրոց մի հաստատուի այն

մեծահարուստ վանքին ծոցը : Բայց որովհետեւ ամառ
 նային վատառողջ օդը խիստ արգելէ այս մեծ ձեռնար-
 կութեանը, մինչեւ անգամ տղոց միտքը եւ սիրտ ճշե-
 լով գրեթէ անհնարին կ'թուի զուարթամիտ կամ առողջ
 յառաջադիմութիւն մի յուսալ աշակերտներէն : Սակայն
 մի թէ այս պատճառը կարող է արգել լինել այս մեծ ձեռ-
 նարկութեանը . ոչ ապաքէն սուրբ Էջմիածնայ մօտ Արա-
 քած լեռան հովասուն դիրքերու վերայ քանի քանի նշա-
 նաւոր վանքերը հիմնուած կան . խիստ բարւոք կ'լինի եթէ
 նոցանից մէկն ընտրուի այս նպատակին համար : Թող վա-
 ռին հռչակաւոր վանորայք Սանահին ու Հաղբատ՝ վրաս-
 տանի Հայոց լուսաւորութեան համար . Գանձասար, Ստա-
 թեւ եւ Ամարասուն վանքերը՝ Սիսական Հայոց . Գեղամայ
 ծովու Կղզին՝ Գեղարքունի Հայոց, (որէ նոր Պայազիտ) :
 սուրբ Թովմայի մեծակառօյց վանքը՝ Գողթան գաւառի
 Հայոց, այսինքն Ագուլեցւոց եւ մերձակայ գիւղորէից :

Ահա այս վանական աշտանակներուն վերայ պայծառ կը-
 փայլէին երբեմն եկեղեցալոյս ճրագները՝ Անանիա Սա-
 նահնեցին, սուրբն Մաշթոց, Գրիգոր Տաթեւացին . որոց
 ճրագներուն գեղեցիկ նշոյլներով կ'ցնծային պատուանդանի
 տակ բնակած բազմաթիւ ժողովուրդները : «Վարսկաստանի
 սահմանին մէջ երկու մեծամեծ աշտանակներ մնացած կան .
 նոր Զուղայու Ամենափրկչի վանքը՝ որուն համար կտեղե-
 կանամք թէ նոյն տեղի վիճակաւոր մեծանուն Թադէոս
 Արք Եպիսկոպոսը . արդէն ճրագ վառեր ու դրեր է այդ
 յիշեալ վանուց աշտանակին վերայ , բայց թէ որչափ լոյս
 կուտայ իւր վառած դպրոցական ճրագը՝ ստոյգ տեղեկու-
 թիւն չունիմք : Այս միայն գիտեմք՝ ճշմարիտ թէ յիշեալ
 վիճակաւորին հովուական արդիւնքը շատ մեծ է Զուղայեցի

Հայոց ու գրեթէ Երասխին մայրենի եզերքէն զրկուած գաղթական հայ զաւակներուն իրեւ մխիթարիչ հարտը ուերէ Աստուած ինչպէս լալով գերութեամբ Բաբելոն գընացող Հրէից ժողովրդեան ալ յուսադրիչ Մարգարէները կ'ըրէր : Իսկ Արտազու զաւառին մէջ եղած հնաշէն եւ նախապատիւ Թադէոս առաքելու վանքը, ո՛հ, իսպառ շլած է իւր ճրագը միթէ մեծ երախտաւոր Առաքեալն բընալին հեւացած ու մոռցուած է հայկազանց աչքէն եւ մտքէն որուն համար սրտառուջ երգերէ տաղասաց ոմն « Թադէոս առաքեալ ընդէր կաս հեռի » եւ այլն :

Ինչնենք այժմ Տաճկաստանի կամ Հայոց մեծ մասի վանորէից աշտանակներ յիշելու զորոնք մեր երանելի նախնիքները իւրաքանչիւր զաւառներու մէջ կառուցեր են վաղ ժամանակէ : Ասոնցմէ շատերը դեռ անլոյս եւ անճրագ կը կենան խիստ սակաւուց մէջը քանի մի փոքրալոյս դպրոցական ճրագները վառիլ սկսերեն : Տարօնոյ բազմաթողովուրդ երկրին համար Մշոյ սուրբ Արապետի վանք, հին մատենադարան Առաքելոց վանքը եւ Յովհաննու վանքը ինչպէս կիմանամք, որ ժամանակէ մի իւրիւր այդ յիշեալ վանորէից մէջ Ժառանգաւորաց դպրոցներ հաստատուած են : Տիգրանակերտու Հայոց համար բարձրահայեաց Աստուածածին : Ճոփաց նահանգը չորս վանք ունի . որուն համար կ'ընեմք սրտի ուրախութեամբ, թէ Տիգրանակերտցի արժանազով Մկրտիչ վարդապետ անուանակից եղբայրն մեր նոր մոմին ծայր վառերէ . կ'մաղթեմք, որ իւզաբերից մոմին չափ լոյս ծաւալելով նոյն փոքրիկ գաւառը լուսաւորէ : Բաղիշոյ սակաւութիւն ժողովրդոց համար հինանուն Ամրտօլու վանքը . որ քանի մի նշանաւոր եւ ընտիր եկեղեցականաց դաստիարակ հանգիստացաւ երբեմն : Բարձր Հայոց Արմոյ նահանգին մէջը

կայ սուրբ Լուսաւորչայ վանքը . Բասենոյ վանքը . Արաշկեր-
սու գաւառին մէջը Եփրատին եզերքը բազմադարեան
կառուցուած սուրբ Յովհաննու վանքը, որ Մկրտարան եղև
սուրբ Տրդատին եւ հնգեառասան բլուր Ժողովրդոց :

Փոքր Հայոց մէջ Սեբաստիոյ սուրբ Նշանայ վանքը,
Մարգուանոյ սուրբ Աստուածածնայ վանքը, Եւգրիւոյ
(Թօղաթ) Յովակիմ Աննայի վանքը . Անն եւ Արապկեր
ենչ վանքեր կան չեմ գիտեր . Տրապիզոնի Հայոց համար
Ամենափրկչի վանքը, որ բաւական կալուածներ ունի :

Հասնենք մինչեւ Ուլիկիոյ սահմանը, Սոյ Թագաւորա-
շէն Վաթուղիկոսարան եւ ընդ հանուր Ուլիկիոյ երկրին մէջ
գտնուած վանքերը, որոնց աշտանակներուն ճրագները, այն
ընտիր ընտիր շնորհալի եւ մատենագիր վարդապետներ չէ-
թէ միայն Ուլիկիոյ եկեղեցիներ լուսաւորեցին, հապա նու
ցա պայծառ ճրագներուն նշոյլ ողջ Հայաստանին տունը
լուսաւորեց : Չմոռնանք Սեսարիոյ նահանգին համար
հռչակաւոր սուրբ Վարապետի վանքը, նորա դրացի սուրբ
Դանիէլի վանքը եւ Թումարզայի վանքը :

Դառնանք գտնք մեր վաղաւորական աշխարհը, որուն
բազմաթիւ վանքերէն դեռ մէկ քանիքն մէջ նոր սկսերեն
աղօտալոյս ճրագներ վառիլ :

Լսեցիր, ազնիւ ընթերցող, թէ մեր աշխատասէր Նախ-
նիք որչափ ճրագակալ աշտանակներ կանգներ են Հայաս-
տանեայց եկեղեցին եւ իւր զաւակները լուսաւորելու հա-
մար : Բոլոր այս աշտանակներէն ցոլացան այն լուսաւորեա-
լաւաւիղներ, այն հանձարաւոր իմաստասէր մատենագիր
վարդապետներ :

Միայն աշտանակներ պատրաստ են, իւրն ալ պատրաստ,
միայն աշխատութիւն եւ վասօղ ձեռքը կ'պակտի . եթէ իս-

պստ չիկայ, աղաչենք որ տայ Աստուած. եթէ հազուադիւր
է, որոններ ու գտնենք. եթէ վհատերէ, քաջալերենք եւ
յուսադրենք. որպէս զի դոցա ձեռքով շիջած ճրագներ կըր-
կնն անգամ վառին եւ մեր հայրենեաց շինութեան ամուր
եւ հաստատուն հիմն ձգուին այդ յիշատակեալ վանորէից
մէջ, այսինքն իւրաքանչիւր վանից հասոյթին համեմատու-
թեան չափ շրջակայ կամ թէմական գիւղերէն ժառանգա-
ւոր աշակերտներ հաւաքել նոյն դպրավանից ծոցերը, աւեր-
ւի որբ եւ անխնամ աղաքները. որպէս զի Ազդն իրենց իւ-
րեւ բարերար հայր ճանաչելով, անձնանուէր հաւատար-
մութեամբ ծառայեն Քրիստոսի եկեղեցոյն. կամ իբրեւ
քաջ Հովիւ Եզիսկրպոսական իշխանութեամբ, կամ իբրեւ
Վարդապետ Աւետարանին քարոզութեամբ, կամ իբրեւ
Քահանայ Ժողովրդեան մեղքերուն քաւիչ հաշտարար Պա-
տարագին միջնորդութեամբ. եւ կամ իբրեւ Վարժապետ
եկեղեցւոյ մանկանց դաստիարակութեամբ :

Եկեղեցւոյ մշտնջենաւոր քաղաքականութիւնը շատ վը-
սեմ եւ բարձր է աշխարհիս յողորդ ու խախուռ քաղա-
քականութենէն. նորա հիմը Յիսուս դրաւ եւ վերայի շէնքը
մինչեւ երկինք բարձրացոյց, այս պատճառաւ եկեղեցին ան-
բաժանելի միութեամբ հաղորդութիւն ունի երկնից բա-
ղաքս կանութեան հետը, ինչպէս Պօղոսին պատգամն ալ
յայտ կ'առնէ, թէ «Մեր քաղաքականութիւն յերկինս է» :

Եկեղեցին Աստուծոյ սաւնէ. Աստուծոյ տան վայելչու-
թիւն հոգեւորապէս դերագանց է աշխարհի բոլոր վայել-
չութենէն : Դաւիթ իւր Թագաւորութեան եւ զահին
փառքը թող կուտայ եւ կասէ միայն «Տէ՛ր, սիրեցի զվա-
յելչութիւն տան քո» : Ո՛ւր է նախնի Հայաստանին Ա-
ստուծոյ տան վայելչութիւն, ո՛ւր են այն լուսապայծառ քահ-

երը, որ ամէն վիճակային եկեղեցւոյ մէջ կ'փայլէին . այն անձնադիր շովիւններ, որ իրենց հօտին վերայ կ'մեռնէին . ինչ որ են այն Աւետարտնի պատգամախօս հրաշաքարող Վարդապետներ, որք հոգեւոր մխիթարութեամբ տառապեալ ժողովուրդը կ'մխիթարէին . ինչ որ են այն Աստուծոյ սեղանին մշտապաշտօն քահանաներ . ահա ասոնք էին երբեմն Աստուծոյ տան իսկական վայելչութիւններ : Չեմ' յիշեր այսօր մեր հայրենի եկեղեցւոյ բուրաստանին զարմանազան փառքերը, որով երբեմն իբրեւ ծաղիկ բացուած կ'բուրէր անուշահոտութեամբ : Աւաղ, ժամանակի ժանտ խորշակներէն թառամեցան թափեցան ծաղիկներ, կորեցաւ անուշահոտութեան բուրումն :

Հալի, թէ կ'սիրես հայրենիքդ, ոտքով եւ այցելութեամբ շրջիր բոլոր Հայաստանի սահմանները . դիտէ, տես աչքիդ առաջ ինչ ողբալի տեսարաններ կ'բացուին . եկեղեցւոյ դաշտեր Ափրիկէի ծարաւոտ անապատ դարձեր են :

Ո՛ր տխուր վանական աղբիւրներն էին երբեմն Հայոց դաշտերուն ջուր բաշխող, ցամաքեցան աղբիւրներ, այսպէս դաշտերն ալ ծարաւ մնալով չորցան, ու տակաւին մնացած կանաչ բողբոջներն ալ գուցէ հեռո՛ք հեռո՛ք չորանան, եւ մեր ծաղիկաւետ բուրաստանին տեղը անապատ դառնայ . ո՛հ . . . Գուշակէ սիրելի ընթերցող, Եսայեան բարբառ Հայաստանին համար երբ պիտի լսուի «Ուրախ լիւր անապատ ծարաւի (Հայրաստան) . զի ես տայ ջուր ի ծարաւոտ երկրի» .

Հայկականց մնացորդ չորս միլիոն ժողովրդոց խիստ փոքրիկ մասն են քաղաքաբնակ, որք միայն կարծեմ Եպիսկոպոսի, Վարդապետի կամ քահանայի երես կտեսնան եւ մեծի պահոց կամ տօնական հանդէսներու օրեր կ'ընեն փոքր իշատէ բեմերուն վերայ հոգեւոր մխիթարութեան ձայններ

իսկ մնացեալ եռապատիկ ժողովրդոց մասն՝ որք գրեթէ բոլորն
 ալ դիւղարնակ են. եթէ մէկը գթոտ աչքով իրենց վիճա-
 կին վերայ նայի, կ'տեսնայ զիրենք ամենայն կերպ թշուա-
 ռութեամբ լի. աղքատութիւն, չքաւորութիւնը գրեթէ
 իրենց համար սեփական է. թող տանք աշխարհի մէջ քա-
 շած ապերժանիկ կեանքը. ո՞վ է վճռեր դոցա համար, որ հո-
 գեւորական հարստութիւնէն կամ մխիթարութիւնէն ալ զուրկ
 մնան: Երջինք բոլոր Հայաստանի մէջը՝ կ'տեսնանք շատ
 տեղ ոչ քահանայ ոչ պատարագ, ոչ ժամերգութիւն,
 ոչ հանդէս եւ ոչ իսկ Աւետարանին: Աստուածաբարաւ
 ձայնա «Տէրն մեր Յիսուս Բրիստոս ասէ», Զարմանք, Պո-
 ղոսի զրուցածին հակառակ, առանց լսելոյ առանց իմանա-
 լոյ առանց քարոզութեան կ'հաւատան եւ այն բոլոր ուսմ-
 կութեան մէջը կ'գտնես շատ անգամ երկիւղած Աստուա-
 ծապաշտ յիմար ընտրեալներ: Ասրժեմ թէ սուրբ շնորհաց
 վարժապետնէ միայն, որ նոցա թանձրացած սիրտը դաստի-
 արակելով՝ հաւատք կենդանի պահերէ: Այսէ ահա աժօթ
 մեծ եւ դատապարտութիւն հոգեւոր պաշտօնէիցս: Լաւ
 մտածէ ու մի ապշիր, ազնիւ ընթերցող, հասկցար արդեօք.
 Թէ ի՞նչպէս վանորէից աղբիւրներուն ակներբ խցուելով այս-
 պէս դիւղական դաշտերուն ծաղիկներ թուովեցան: Յիրաւի
 հոգեւոր մխիթարութեան աղբիւրներուն ջուր կտրած է իս-
 պառ վանքերու ակներէն. բայց գիւղացւոց աղբիւրները ա-
 ռատ կ'վազեն. այսինքն պտղիւն տուրք առատապէս կ'վճա-
 րեն նախնի սովորութեան համեմատ: Ո՞ր իրաւունքն է
 այս, արդեօք Պողոսին տուածը, սեղանին բարիքներն առատ
 առատ վայելել առանց պաշտօնի կամ ծառայութեան:
 Հաւատացելոց մէջը հաւասարութիւն կայ, խտրութիւն չի
 կայ: Յիսուսի աչքին առաջը մի եւ նոյն են շինական եւ

քաղաքացի հաւատացեալ : Ո՞ւր եւ արդարութիւն , դու վճռէ այս դատաստան . ի՞նչ իրաւունք է արդեօք որ շինական ժողովուրդը քաղաքացի ժողովրդոց հետը մի եւ նոյն հոգեւոր մխիթարութեան հաւատարութիւն չունենայ . մինչդեռ նոքա եկեղեցական սուրբերուն բռնկողովի տանին եւ կարծեմ քաղաքական տուրքերն ալ իրենց ուժէն վեր կրկնապատիկ կ'վճարեն : Եւ թէ քանի մի երեւելի վանքերը դեռ կանգուն կիցած են ոտքի վերայ . այդ եւս դարձեալ գիւղական ժողովրդոց շնորհքն են :

Ուրեմն պարտական է եկեղեցական կառավարութիւն դոցա համար մեծ հոգածութեամբ տնօրէնութիւն առնել :

